| **Terms of personal data processing** | **Անձնական տվյալների մշակման պայմաններ** |
|---|---|
| These terms define how we collect and process personal data about you that you provided through www.eif.am web-site or other tools used for data collection from our partner EIF (Enterprise Incubator Foundation). | Սույն պայմանները սահմանում են, թե մենք ինչպես ենք հավաքում և մշակում Ձեր անձնական տվյալները, որը Դուք տրամադրել եք մեր գործընկեր՝ «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի (այսուհետ՝ «ՁԻՀ») կայքի (www.eif.am) միջոցով կամ տվյալների հավաքագրման այլ գործիքներով: |
| To the extent that we collect any personal information (name, surname, contact information, information about education, place of work etc.) about you, hereby we notify that we will collect and process it in accordance with PMI privacy notice and these terms (hereinafter the "**Terms**"). We and each other members of the Philip Morris International group of companies is a "PMI affiliate". "We" (or "we" or "us" or "our") refers to the PMI affiliate that is using information about you, and the relevant PMI affiliate will identify itself to you when collecting your information through, for example, transparent privacy disclosures. When we say "a PMI Ecosystem initiative" (or similar, e.g. event, funding programs, trainings), we mean an initiative (or events, funding programs, trainings, etc.) of ours or of another PMI affiliate. | Սույնով Ձեզ ծանուցում ենք, որ Ձեր մասին ցանկացած անձնական տվյալ (անուն, ազգանուն, կոնտակտային տվյալներ, տեղեկություն կրթության, աշխատավայրի մասին և այլն) մեր կողմից հավաքվելու դեպքում, մենք այդ տվյալները հավաքելու և մշակելու ենք ՖՄԻ գաղտնիության ծանուցման և սույն պայմանների (այսուհետ՝ «Պայմաններ») համաձայն: Մենք և Ֆիլիպ Մորրիս Ինթըրնեյշնլ ընկերությունների խմբի յուրաքանչյուր այլ անդամ հանդիսանում է «ՖՄԻ-ի հետ փոխկապակցված անձ»: «Մենք» (կամ «մենք» կամ «մեզ» կամ «մեր») բառերը նշանակում են՝ ՖՄԻ-ի հետ փոխկապացված անձը, որն օգտագործում է Ձեր մասին տվյալները և համապատասխան ՖՄԻ-ի հետ փոխկապակցված անձը, որը Ձեզ կներկայանա Ձեր մասին տվյալները հավաքելու ժամանակ, օրինակ՝ անձնական տվյալների մշակման թափանցիկ բացահայտումների միջոցով: Երբ մենք ասում ենք «ՖՄԻ էկոհամակարգի զարգացման նախաձեռնություն» (կամ նմանատիպ այլ բան, օրինակ՝ միջոցառում, ֆինանսավորվող ծրագրեր, թրեյնինգներ), մենք նկատի ունենք մեր կամ ՖՄԻ-ի հետ փոխկապակցված այլ անձի նախաձեռնությունը (կամ միջոցառում, |

| | |
|---|---|
| | ֆինանսավորվող ծրագրեր, թրեյնինգներ և այլն)։ |
| Depending on the purposes for which information about you was collected, information about you may be shared with, and accessed by, other PMI affiliates, if appropriate to fulfil further communication and cooperation with you. The information will be shared with PMI affiliate, which deals with administration of personal data processing for PMI affiliates; the information will be shared with the PMI affiliate that is responsible for the country in which you are normally resident (if it wasn't the affiliate that first collected the information); and if you travel out of your normal country of residence, the information may be used also by the PMI affiliates that operate in the countries in which you are travelling. | Կախված այն նպատակներից, որոնց համար հավաքվել են Ձեր մասին տվյալները, դրանք կարող են տրամադրվել ՖՄԻ-ի հետ փոխկապակցված այլ անձանց և այդ անձինք կարող են հասանելիություն ունենալ այդ տվյալներին, եթե առկա է Ձեզ հետ հաղորդակցվելու ու համագործակցելու անհրաժեշտություն։ Տեղեկությունները կփոխանցվեն ՖՄԻ-ի հետ փոխկապայցված անձի, որն իրականացնում է անձնական տվյալների մշակման կառավարում ՖՄԻ-ի հետ փոխկապակցված անձանց համար. տվյալները կփոխանցվեն ՖՄԻ-ի հետ փոխկապակցված այն անձին, որը պատասխանատու է այն երկրի համար, որտեղ Դուք սովորաբար բնակվում եք (եթե դա հենց այն փոխկապակցված անձը չէ, որն ի սկզբանե հավաքել է այդ տվյալները), իսկ եթե Դուք ճանապարհորդում եք այն երկրից դուրս, որտեղ սովորաբար բնակվում եք, ապա տվյալները կարող են օգտագործվել նաև ՖՄԻ-ի հետ փոխկապակցված այն անձանց կողմից, որոնք գործում են այն երկրներում, որտեղ Դուք ճանապարհորդում եք։ |
| Details of the PMI affiliates and the countries in which they are established are available on the relevant country pages of www.pmi.com. | ՖՄԻ-ի հետ փոխկապակցված անձանց և դրանց հիմնադրման երկրների մասին տեղեկությունները հասանելի են www.pmi.com կայքի համապատասխան երկրի էջերում։ |
| The information about you that we use may include: | Մեր կողմից օգտագործվող Ձեր տվյալները, կարող են ներառել. |
| • The information may be provided by you in a variety of contexts – for example, when: applying to one of Ecosystem initiatives, registering to receive PMI press releases or email alerts; | • Տվյալներ, որոնք կարող են Ձեր կողմից տրամադրվել տարբեր համատեքստերում, օրինակ՝ երբ Դուք դիմում եք մեր Էկոհամակարգի զարգացման ծրագրերից |

| | |
|---|---|
| participating in PMI competitions, events, promotions or surveys; or contacting us through one of our digital platforms, or by e-mail, social media or telephone. In these cases, the information that we collect and use will normally be apparent from the context in which you provide information. | որևէ մեկին, գրանցվում եք, որպեսզի ստանաք ՖՄԻ-ի մամլո հաղորդագրությունները կամ էլեկտրոնային փոստով ծանուցումները, մասնակցում եք ՖՄԻ-ի մրցույթներին, միջոցառումներին, առաջխաղացումներին կամ հարցումներին, կամ կապ եք հաստատում մեզ հետ մեր թվային հարթակներից որևէ մեկի միջոցով, կամ էլեկտրոնային փոստով, սոցիալական մեդիայով կամ հեռախոսով: Այս դեպքերում մենք հավաքում և օգտագործում ենք այն տվյալները, որոնք սովորաբար ակնհայտ են դրանց տրամադրման համատեքստից: |
| • Information that we acquire from third parties | • Տեղեկատվությունները, որոնք մենք ստանում ենք երրորդ անձանցից: |
| From time to time, and only where permitted by law, we may acquire information about you from third parties. This may include information shared between PMI affiliates, publicly-available profile information on third party social media sites (such as Facebook and Twitter), and lists acquired from third party agencies. | Ժամանակ առ ժամանակ, և միայն այն դեպքում, երբ դա թույլատրված է օրենքով, մենք կարող ենք Ձեր մասին տվյալներ ստանալ երրորդ անձանցից: Սա կարող է ներառել ՖՄԻ-ի հետ փոխկապակցված անձանց տրամադրված տվյալները, երրորդ կողմի սոցիալական մեդիայի կայքերում (օրինակ՝ Facebook-ում և Twitter-ում) հանրությանը հասանելի պրոֆիլի տվյալները և երրորդ կողմի գործակալություններից ստացված ցուցակները: |
| **General uses of information about you** | **Ձեր տվյալների ընդհանուր օգտագործումը** |
| In general, we may process information about you for the following purposes: | Ընդհանուր առմամբ, մենք կարող ենք Ձեր տվյալները մշակել հետևյալ նպատակներով. |
| (a) information that you provide is typically used for verifying your status as an applicant of PMI Ecosystem initiatives; dealing with your inquiries and requests; enabling you to be a participant of PMI Ecosystem initiatives; administering your applications, processing payments, correspondence, including sending you informative communications in accordance with | ա) Ձեր կողմից տրամադրող տվյալները սովորաբար օգտագործվում են Ձեր կարգավիճակը՝ որպես ՖՄԻ էկոհամակարգի զարգացման ծրագրերին դիմողի ստուգելու համար, Ձեր հարցումներով և պահանջներով զբաղվելու համար, Ձեզ ՖՄԻ էկոհամակարգի զարգացման նախաձեռնության մասնակից |

| | |
|---|---|
| your preferences; providing you information about other similar activities; administrative purposes; improving PMI Ecosystem initiatives and the information that we (or our affiliates) provide to our applicants; inviting you to participate in surveys or market research campaigns which will be conducted by us or third parties; providing you with information about, and managing, PMI affiliates, their initiatives (where permitted by law), services and events; | դարձնելու համար, Ձեր դիմումները կառավարելու, վճարումները կատարելու, նամակագրության, այդ թվում՝ Ձեր նախապատվությունների համաձայն Ձեզ տեղեկատվական հաղորդագրություններ ուղարկելու համար, Ձեզ նմանօրինակ այլ գործունեությունների մասին տեղեկություններ տրամադրելու համար, վարչական նպատակներով, ՖՄԻ Էկոհամակարգի զարգացման նախաձեռնությունները և մեր դիմողներին՝ մեր (կամ մեր հետ փոխկապակցված անձանց) կողմից տրամադրվող տեղեկությունները բարելավելու համար, մեր կամ երրորդ անձանց կողմից անցկացվող հարցումներին կամ շուկայական հետազոտություններին մասնակցելու հրավեր ուղարկելու համար, ՖՄԻ-ի հետ փոխկապակցված անձանց, վերջիններիս նախաձեռնությունների (եթե դա թույլատրված է օրենքով), ծառայությունների և միջոցառումների մասին տեղեկատվություն տրամադրելու համար: |
| (b) information that PMI affiliates acquire from third parties may (where permitted by law) be combined with other information about you in order to update or supplement PMI affiliates' records, to learn more about your preferences, and to provide you with information about PMI initiatives that is better tailored to your interests. | բ) երրորդ անձանցից ՖՄԻ-ի հետ փոխկապակցված անձանց կողմից ձեռք բերած տեղեկությունները կարող են (եթե դա թույլատրվում է օրենքով), համակցված լինել Ձեր հետ կապված այլ տվյալների հետ՝ ՖՄԻ-ի հետ փոխկապակցված անձանց տվյալները թարմացնելու կամ լրացնելու, Ձեր նախասիրությունների մասին ավելի շատ տեղեկություններ իմանալու և Ձեր հետաքրքրություններին առավելագույնս համապատասխանող նախաձեռնությունների մասին տեղեկատվություն տրամադրելու նպատակով: Վերը նշված պատճառներով ՖՄԻ-ի հետ փոխկապակցված անձանց միջև |

| | |
|---|---|
| As well as sharing information about you between PMI affiliates for the reasons explained above, we may also share personal information about you with: | Ձեր մասին տեղեկություններ փոխանակելու հետ մեկտեղ, մենք կարող ենք նաև Ձեր անձնական տվյալները տրամադրել. |
| (a) PMI affiliates' carefully-selected third party partners so that they can contact you with initiatives that they think may interest you, in accordance with your preferences; and | (ա) ՖՄԻ-ի հետ փոխկապակցված անձանց կողմից հանգամանորեն ընտրված երրորդ անձ հանդիսացող գործընկերներին, որպեսզի նրանք կարողանան կապ հաստատել Ձեզ հետ այն նախաձեռնությունների մասով, որոնք իրենց կարծիքով կարող են հետաքրքիր լինել Ձեզ համար՝ Ձեր նախասիրությունների համաձայն, և |
| (b) other third parties, where required or permitted by law, for example: regulatory authorities; government departments; in response to a request from law enforcement authorities or other government officials; when we consider disclosure to be necessary or appropriate to prevent physical harm or financial loss or in connection with an investigation of suspected or actual illegal activity; and in the context of organizational restructuring. | (բ) օրենքով պահանջվող կամ թույլատրված այլ երրորդ անձանց, օրինակ՝ կարգավորող մարմիններին, պետական գերատեսչություններին, ի պատասխան իրավապահ մարմինների կամ այլ պետական պաշտոնյաների հարցումների, երբ մենք գտնում ենք, որ այդ տվյալների բացահայտումն անհրաժեշտ է կամ տեղին է ֆիզիկական վնասը կամ ֆինանսական կորուստը կանխելու համար կամ կասկածվող կամ փաստացի անօրինական գործունեության քննության հետ կապված, և կազմակերպչական վերակազմավորման համատեքստում: |
| If you want to unsubscribe from receiving any notification related to PMI Ecosystem initiatives, please call: to PMI at +374 60 65 60 43 or EIF at +374 11 21 97 97. | Եթե ցանկանում եք հրաժարվել ՖՄԻ Էկոհամակարգի զարգացման նախաձեռնություններին առնչվող որևէ ծանուցում ստանալուց, խնդրում ենք զանգահարել՝ ՖՄԻ +374 60 65 60 43 կամ ՁԻՀ +374 11 21 97 97: |
| The period for which we may retain personal information about you will depend upon the purposes for which the information was collected, whether you have requested the deletion of the information, and whether any legal obligations | Այն ժամանակահատվածը, որի ընթացքում մենք կարող ենք պահպանել Ձեր անձնական տվյալները, կախված կլինի այն նպատակներից, որոնց համար այդ տեղեկությունները հավաքվել են, և այն |

| | |
|---|---|
| require the retention of the information, (for example, for tax and accounting purposes). In general, we will not retain personal information about you for longer than is necessary to fulfil the purposes for which the information was collected. | փաստից, թե արդյոք Դուք խնդրել եք ջնջել այդ տվյալները, և արդյոք որևէ իրավական պարտավորություն պահանջում է տվյալներիի պահպանումը (օրինակ, հարկային և հաշվապահական նպատակներով): Հիմնականում, մենք չենք պահպանում ձեր անձնական տվյալներն ավելի երկար, քան դա անհրաժեշտ է իրագործելու այն նպատակները, որոնց համար այդ տեղեկությունները հավաքվել են: |
| You have the following rights in respect of personal information about you that we hold: | Մեզ մոտ պահվող Ձեր անձնական տվյալների հետ կապված Դուք ունեք հետևյալ իրավունքները. |
| (a) request us to give you access to the information; | ա) պահանջել տվյալներին Ձեզ հասանելիության տրամադրում, |
| (b) request us to correct it, update it or block it in cases provided under the Law of the Republic of Armenia “On Protection of Personal Data”; | բ) պահանջել տվյալների ուղղում, թարմացում կամ ուղեփակում՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում, |
| (c) request us to erase (destruct) it in cases provided under the Law of the Republic of Armenia “On Protection of Personal Data”; | գ) պահանջել տվյալների ջնջում (ոչնչացում)՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում, |
| (d) request us to terminate processing of personal information in cases provided under the Law of the Republic of Armenia “On Protection of Personal Data”; | դ) պահանջել տվյալների մշակման դադարեցում՝ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում, |
| (e) request implementation of other actions required under these Terms and the Law of the Republic of Armenia “On Protection of Personal Data”. | ե) պահանջել իրականացնել սույն Պայմաններով և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված այլ գործողություններ: |
| By accepting these Terms, you give us your consent to process your personal information pursuant to the terms described herein. Your consent on processing of your personal information shall be valid until you withdraw it. | Սույն Պայմաններն ընդունելով՝ Դուք Ձեր համաձայնությունն եք տալիս դրանցով նշված պայմաններով Ձեր անձնական տվյալների մշակմանը: Ձեր անձնական տվյալները մշակելու Ձեր համաձայնությունը գործում է մինչև Ձեր կողմից այն հետ |

| | |
|---|---|
| You can withdraw your consent on personal data processing pursuant to the procedure envisaged under the Law of the Republic of Armenia "On Protection of Personal Data". Withdrawal of your consent on personal data processing entails the consequences stipulated in part 6 of Article 21 of the Law of the Republic of Armenia "On Protection of Personal Data". | կանչելը: Դուք կարող եք անձնական տվյալների մշակման Ձեր համաձայնությունը հետ կանչել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Անձնական տվյալների մշակման Ձեր համաձայնության հետ կանչը հանգեցնում է «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված հետևանքների: |
| If you have any questions, or wish to exercise any of your rights, you can contact PMI at 2 Vazgen Sargsyan st., Yerevan 0010, Armenia or EIF at 21/1 Bagrevand St., Yerevan 0062, Armenia. | Եթե ունեք հարցեր, կամ ցանկանում եք իրականացնել Ձեր իրավունքները, կարող եք կապ հաստատել մեզ հետ.<br>ՖՄԻ՝ ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2 և ՁԻՀ՝ ք.Երևան 0062, Բագրևանդի փ. 21/1 |